Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

# ПРИКАЗ
# ՀՐԱՄԱՆ

«15» դեկտեմբերի 2025թ.                                   № 1365 - Ա

## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի նոյեմբերի 24-ի N 113 հրամանի 4-րդ կետը և ղեկավարվելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ նաև Հիմնարկ) կանոնադրության 84-րդ կետի 7-րդ ենթակետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ընդունել ի գիտություն, որ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի նոյեմբերի 24-ի N 113 հրամանով հաստատվել է Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի, և Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոցի ընդունելության կարգերը:

2. Սահմանել Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց, ինչպես նաև Հիմնարկի՝

Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց՝

1) ընդունող հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների,

2) ընդունելության ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի,

3) ընդունելության համար դիմումների օրինակելի ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հիմնարկի տնօրենի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 1151-Ա հրամանը, 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 1168-Ա հրամանի 1-ին կետը և 2024 թվականի փետրվարի 19-ի N 111-Ա հրամանի 1-ին և 2-րդ կետերը:

4. Սույն հրամանի կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հիմնարկի դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատուներ՝ Մ.Ներսիսյանի, Լ.Գալստյանի և Ձ.Ղալթախչյանի վրա:

5. Հիմնարկի տնօրենի տեղակալներ՝ Ե.Ամիրխանյանին և Է.Սանթրոսյանին՝ ապահովել սույն հրամանի կատարման հսկողությունը:

ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի դեկտեմբերի 15-ի N 1365-Ա հրամանի

## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունող հանձնաժողովի անհատական կազմը՝

1) Դպրոցի 1-4-րդ դասարաններ ընդունող հանձնաժողով՝

| Հ/Հ | Պաշտոնը | Անուն, հայրանուն, ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հիմնարկի տնօրենի տեղակալ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով | Ելենա Էդուարդի Ամիրխանյան (հանձնաժողովի նախագահ) |
| 2 | Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու | Մերի Սուրիկի Ներսիսյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ) |
| 3 | Դպրոցի ադմինիստրատիվ օգնական | Մարիյա Կոնստանտինի Օրբելյան (հանձնաժողովի քարտուղար) |
| 4 | Հիմնարկի տարրական դպրոցի ուսուցիչ (դասվար) | Մերի Հենրիկի Ներսիսյան |
| 5 | | Յուլյա Վրեժի Սևումյան |
| 6 | | Նոննա Սերգեյի Մովսիսյան |
| 7 | | Տաթևիկ Արթուրի Հակոբյան |
| 8 | | Տիրուհի Նարեկի Գևորգյան |
| 9 | | Լիլիթ Սամվելի Մելիքյան |
| 10 | | Հասմիկ Միշայի Ավետիսյան |
| 11 | | Լիանա Գասպարի Ավետիսյան |
| 12 | | Նարինե Սամվելի Բարեղամյան |
| 13 | | Քրիստինե Անդրանիկի Ազարյան |
| 14 | | Աննա Կարենի Միրիբյան |

| | | |
|---|---|---|
| 15 | | Մարգարիտա Գագիկի Բալաբեկյան |
| 16 | | Անի Կարենի Բաղդասարյան |
| 17 | | Անի Գառնիկի Նիկողոսյան |
| 18 | | Անահիտ Վարդանի Հակոբյան |
| 19 | | Սիրուն Գևորգի Թորոսյան |
| 20 | Դպրոցի հոգեբան | Նինա Ալբերտի Մովսիսյան |
| 21 | | Անժելա Մանվելի Սարգսյան |
| 22 | | Սուսաննա Արսենի Գրիգորյան |
| 23 | Դպրոցի լոգոպեդ | Ասյա Հակոբի Հակոբյան |

2) Դպրոցի 5-6-րդ դասարաններ ընդունող հանձնաժողով՝

| Հ/Հ | Պաշտոնը | Անուն, հայրանուն, ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հիմնարկի տնօրենի տեղակալ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով | Ելենա Էդուարդի Ամիրխանյան (հանձնաժողովի նախագահ) |
| 2 | Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու | Մերի Սուրիկի Ներսիսյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ) |
| 3 | Դպրոցի ադմինիստրատիվ օգնական | Արմինե Հակոբի Մալխասյան (հանձնաժողովի քարտուղար) |
| 4 | Դպրոցի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ | Արշալույս Մերուժանի Գալստյան |
| 5 | Դպրոցի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ | Թամարա Արամի Առուշանովա |
| 6 | Դպրոցի օտար լեզուների ամբիոնի վարիչ | Գոհար Մարտինի Թադևոսյան |
| 7 | Դպրոցի մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ | Սմբատ Գրիգորի Շահինյան |
| 8 | Դպրոցի հոգեբան | Մանե Արթուրի Աբաջյան |

3) Դպրոցի 7-9-րդ դասարաններ ընդունող հանձնաժողով՝

| Հ/Հ | Պաշտոնը | Անուն, հայրանուն, ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հիմնարկի տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների և սպորտի գծով | Էմին Ազատի Սանթրոսյան (հանձնաժողովի նախագահ) |
| 2 | Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու | Զարուհի Ալեքսանդրի Ղալթախչյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ) |

| | | |
|---|---|---|
| 3 | Հիմնարկի ադմինիստրատիվ օգնական | Անահիտ Արմենի Գրիգորյան (հանձնաժողովի քարտուղար) |
| 4 | Դպրոցի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ | Արշալույս Մերուժանի Գալստյան |
| 5 | Դպրոցի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ | Թամարա Արամի Առուշանովա |
| 6 | Դպրոցի օտար լեզուների ամբիոնի վարիչ | Գոհար Մարտինի Թադևոսյան |
| 7 | Դպրոցի մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ | Սմբատ Գրիգորի Շահինյան |

4) Դպրոցի 10-12-րդ դասարաններ ընդունող հանձնաժողով՝

| Հ/Հ | Պաշտոնը | Անուն, հայրանուն, ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հիմնարկի տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների և սպորտի գծով | Էմին Ազատի Սանթրոսյան (հանձնաժողովի նախագահ) |
| 2 | Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու | Զարուհի Ալեքսանդրի Ղալթախչյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ) |
| 3 | Հիմնարկի ադմինիստրատիվ օգնական | Անահիտ Արմենի Գրիգորյան (հանձնաժողովի քարտուղար) |
| 4 | Դպրոցի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ | Արշալույս Մերուժանի Գալստյան |
| 5 | Դպրոցի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ | Թամարա Արամի Առուշանովա |
| 6 | Դպրոցի օտար լեզուների ամբիոնի վարիչ | Գոհար Մարտինի Թադևոսյան |
| 7 | Դպրոցի մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ | Սմբատ Գրիգորի Շահինյան |
| 8 | Դպրոցի հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ | Նժդեհ Արտաշեսի Հովսեփյան |
| 9 | Դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ | Աղասի Սամվելի Միքայելյան |
| 10 | Դպրոցի քիմիայի ուսուցիչ | Կարինե Վլադիմիրի Տուրյան |
| 11 | Դպրոցի կենսաբանության ուսուցիչ | Լևոն Հենրիկի Նազարյան |

2. Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց ընդունող հանձնաժողովի անհատական կազմը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Անուն, հայրանուն, ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հիմնարկի տնօրենի տեղակալ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով | Ելենա Էդուարդի Ամիրխանյան (հանձնաժողովի նախագահ) |
| 2 | Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու | Լուսինե Վազգենի Գալստյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ) |
| 3 | Դպրոցի ադմինիստրատիվ օգնական | Արմինե Հակոբի Մալխասյան (հանձնաժողովի քարտուղար) |
| 4 | Հիմնարկի տարրական դպրոցի ուսուցիչ (դասվար) | Գայանե Գոռի Սիմոնյան |
| 5 | | Քրիստինա Էդիկի Միրզաջանյան |
| 6 | | Գայանե Սեմյոնի Գևորգյան |
| 7 | Դպրոցի հոգեբան | Նինա Ալբերտի Մովսիսյան |
| 8 | | Սուսաննա Արսենի Գրիգորյան |
| 9 | Դպրոցի լոգոպեդ | Ասյա Հակոբի Հակոբյան |

Հավելված N 2
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի դեկտեմբերի 15-ի N 1365-Ա հրամանի

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

## I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց, ինչպես նաև Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունող հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման և ընդունելության անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Դպրոց ընդունելությունը կազմակերպում և անցկացնում է Հանձնաժողովը, որը կազմում է ընդունելության կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը (օժանդակ նյութեր, թեստեր և այլն), իրականացնում է ընդունելության գործընթացի արդյունքների գնահատումը և ամփոփումը, ինչպես նաև քննարկում և լուծում է ընդունելության անցկացմանն առնչվող խնդիրները:

3. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է Հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները.

3) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

4. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի աշխատանքների համար անհրաժեշտ նյութերն, այդ թվում՝ նիստի օրակարգին վերաբերող, ու դրանք տրամադրում Հանձնաժողովի անդամներին.

2) կազմում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամկետի և օրակարգում ընդգրկված հարցերի մասին Հանձնաժողովի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ գրավոր կամ բանավոր տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին:

5. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են Հանձնաժողովի նիստերին.

2) ընդունվողների վերաբերյալ տալիս են կարծիք (եզրակացություն) և (կամ) ստուգում ու գնահատում են ընդունվողների աշխատանքները.

3) մասնակցում են որոշումների ընդունման համար քվեարկությանը:

6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

7. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրա փոխարինում է Հանձնաժողովի նախագահի տեղակալը:

8.Հանձնաժողովի անդամները (ներառյալ՝ Հանձնաժողովի Նախագահը, տեղակալը և քարտուղարը) պարտավոր են ապահովել անձնական տվյալների պաշտպանության հետ կապված իրավական ակտերի պահանջները:

9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Նիստն իրավազոր չլինելու դեպքում այն հետաձգվում է: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

## II. ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑԻ 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Հիմնարկի Դպրոցի 1-ին դասարանի ընդունելությունը կազմակերպվում է եռափուլ գործընթացով:

11. 1-ին փուլի շրջանակներում իրականացվում է 1-ին դասարան ընդունվող երեխաների ծնողների՝ բաց դռների օրվա էլեկտրոնային գրանցումը, ապահովվում է վերջիններիս մասնակցությունը բաց դռների օրվան և ծանոթացումը Դպրոցին ու կրթական ծրագրին, ինչպես նաև կատարվում է ընդունելության համար գրանցումը:

12. 2-րդ փուլի շրջանակներում 1-ին դասարան ընդունվող երեխայի հետ անցկացվում են փուլային հարցազրույց-հանդիպումներ, այն է՝

1) երեխայի հետ անհատական հանդիպման ձևաչափով իրականացվում են իմացական ոլորտի և ուսումնական հմտությունների դիտարկում-հետազոտություն՝ Դպրոցի (տարրական) ուսուցչի (դասվարի) կողմից և հուզակամային ու վարքային ոլորտների դիտարկում-հետազոտություն՝ Դպրոցի հոգեբանի կողմից, հնչարտաբերման, հնչյունահնչութային լսողության և խոսքի ընկալման դիտարկում-հետազոտություն՝ Դպրոցի լոգոպեդի կողմից.

2) երեխաների հետ խմբային խաղ-հանդիպման ձևաչափով իրականացվում է շփման, հաղորդակցման և սոցիալական, ինչպես նաև ինքնակարգավորման և ինքնասպասարկման հմտությունների դիտարկում-հետազոտություն:

13. 3-րդ փուլի շրջանակներում իրականացվում են հարցազրույց-հանդիպումների արդյունքների ամփոփում, այն է՝

1) արդյունքների ամփոփում և Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման մասին տեղեկացում ծնող(ներ)ին (օրինական ներկայացուցիչներին)՝ էլեկտրոնային նամակի միջոցով.

2) պայմանագր(եր)ի կնքում:

14. 1-ին՝ անհատական հարցազրույցի փուլում դիտարկվում են հետևյալ ոլորտները՝

- իմացական ոլորտ (ուշադրություն, հիշողություն, մտածողություն, խոսք, ընկալում, երևակայություն), ինչութային լսողություն: Դիտարկում-հետազոտությունն իրականացվում է 10 միավորային համակարգով, անցողիկ է համարվում 6.0 միավորը.

- հուզակամային (հույզերի ընկալում, տարբերակում, իրավիճակին համապատասխան հուզական արձագանք) և վարքային ոլորտներ (ագրեսիվություն, իմպուլսիվություն, ինքնապաշտպանական հմտություններ), ուսումնական մոտիվացիա: Դիտարկում-հետազոտությունն իրականացվում է 10 միավորային համակարգով, անցողիկ է համարվում 6.0 միավորը:

15. 2-րդ՝ փուլային-հանդիպումների փուլում դիտարկվում են հետևյալ բաղադրիչները.

- սոցիալական հմտություններ,
- խաղային հմտություններ,
- հաղորդակցման հմտություններ,
- հաղորդակցման ոչ վերբալ հմտություններ,
- ինքնակարգավորման և ինքնասպասարկման հմտություններ,
- հուզական և վարքային ոլորտների առանձնահատկությունները խմբում:

Դիտարկում-հետազոտությունն իրականացվում է 10 միավորային համակարգով, անցողիկ է համարվում 6.0 միավորը:

Երեխան մրցութային կարգով **կարող է** ընդունվել Դպրոց, եթե հաղթահարում է յուրաքանչյուր փուլի անցողիկ շեմը՝ վաստակելով առնվազն 6-ական միավոր:

**Սույն բաժնում նշված դիտարկում-հետազոտությունները չեն հանդիսանում գիտելիքի ստուգում և չեն կարող դիտարկվել որպես այդպիսին:**

## III. ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑԻ 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Հիմնարկի Դպրոցի 2-4-րդ դասարաններ ներառյալ ընդունելությունը կազմակերպվում է եռափուլ գործընթացով (թափուր տեղերի առկայության պարագայում):

17. 1-ին փուլի շրջանակներում իրականացվում է ընդունելության գրանցում և ծնողների ծանոթացում Դպրոցին ու կրթական ծրագրին:

18. 2-րդ փուլի շրջանակներում իրականացվում է հայտորոշիչ գնահատում՝ իմացական, հուզակամային և վարքային ոլորտների դիտարկում-գնահատում, այն է՝

1) երեխայի հետ անհատական հանդիպման ձևաչափով իրականացվում է իմացական ոլորտի և ուսումնական հմտությունների դիտարկում-գնահատում՝ Դպրոցի (տարրական) ուսուցչի (դասվար) կողմից, հուզակամային և վարքային ոլորտների դիտարկում-գնահատում՝ Դպրոցի հոգեբանի կողմից, ինչպես նաև հնչարտաբերման, հնչյունահնչութային լսողության, խոսքի ընկալման դիտարկում-գնահատում՝ Դպրոցի լոգոպեդի կողմից.

2) դասագործընթացին փորձնական մասնակցության ձևաչափով (եթե ընդունվում է Դպրոց ուսումնառության ժամանակահատվածում)՝ 1-3 օր տևողությամբ, ամբողջական գրաֆիկով, իրականացվում է շփման, հաղորդակցման և սոցիալական հմտությունների դիտարկում-գնահատում՝ Դպրոցի (տարրական) ուսուցչի (դասվար) և Դպրոցի հոգեբանի կողմից:

19. Հայտորոշիչ գնահատումը՝ իմացական, հուզակամային և վարքային ոլորտների դիտարկում-գնահատումն իրականացնում է հետևյալ կարգով.

1) **Գիտելիքի ստուգում, գնահատում.** գործընթացն իրականացվում է Դպրոցի (տարրական) ուսուցչի (դասվար) և Դպրոցի լոգոպեդի կողմից և ենթադրում է ուսումնական առաջադրանքների կատարում՝ թեստային ձևաչափով և բանավոր հարցմամբ, որն իր մեջ

ներառում է «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաների գիտելիքների ստուգում և գնահատում՝ համաձայն համապատասխան տարիքային չափորոշիչներին: Երեխային տրվում են ընդունող հանձնաժողովի կողմից նախապես կազմված թեստային աշխատանքներ «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից: Թեստը բաղկացած է 10 առաջադրանքից: Յուրաքանչյուր առարկայի համար սովորողին տրվում է 40-60 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր առարկայի մասով առաջադրանքը գնահատվում է 10 միավորային համակարգով, անցողիկ է համարվում 6.0 միավորը,

2) **Հուզակամային և վարքային ոլորտների դիտարկում-գնահատում.** գործընթացն իրականացվում է Դպրոցի հոգեբանի կողմից և ենթադրում է զրույց երեխայի հետ՝ համապատասխան մեթոդների և մեթոդիկաների կիրառմամբ: Գնահատումն իրականացվում է 10 միավորային համակարգով, անցողիկ է համարվում 6.0 միավորը,

3) **Շփման, հաղորդակցման և սոցիալական հմտությունների դիտարկում-գնահատում (կարող է իրականացվել ըստ հնարավորության և կամ ըստ անհրաժեշտության).** գործընթացն իրականացվում է Դպրոցի (տարրական) ուսուցչի (դասվար) և Դպրոցի հոգեբանի կողմից ու ենթադրում է երեխայի՝ դասագործընթացին փորձնական մասնակցություն՝ 1-3 օր ամբողջօրյա գրաֆիկով, և ընդգրկվում է ուսումնական գործընթացի մեջ: Գործընթացի շրջանակներում դիտարկվում են երեխայի՝ շփման, հաղորդակցման, վարքային, հուզակամային ոլորտների առանձնահատկությունները, ուսումնական մոտիվացիան:

Երեխան կարող է ընդունվել Դպրոց, եթե հաղթահարում է յուրաքանչյուր փուլի անցողիկ շեմը՝ վաստակելով առնվազն 6-ական միավոր:

20. 3-րդ փուլի շրջանակներում իրականացվում է դիտարկման և գնահատման արդյունքների ամփոփում, այն է՝

1) արդյունքների ամփոփում և Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման մասին տեղեկացում ծնող(ներ)ին (օրինական ներկայացուցիչներին) էլեկտրոնային նամակի միջոցով,

2) պայմանագր(եր)ի կնքում:

## IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑԻ 5-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

21.Հիմնարկի միջին և ավագ դպրոց ընդունվելու համար (թափուր տեղերի առկայության պարագայում) Դպրոցին և կրթական ծրագրին ծանոթանալուց հետո միջին կամ ավագ դպրոց (5-12-րդ դասարաններ ներառյալ) ընդունվող երեխան անցնում է գիտելիքների թեստավորման փուլը:

22.Գիտելիքների թեստավորման փուլը միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ ներառյալ) իրականացվում է 4 հիմնական առարկաներից բաղկացած ստուգաթեստի միջոցով: Ստուգաթեստը գնահատվում է 10 միավորային համակարգով: Գնահատականը ստացվում է առարկայական թեստերի արդյունքների պարզ կշռված միջինից՝ հետևյալ համամասնությամբ.

- մաթեմատիկա՝ 40%,
- հայոց լեզու և գրականություն՝ 30%,
- անգլերեն և ռուսաց լեզու՝ 30%:

Անցողիկ է համարվում արդյունքային 5.0-ից ավել միավոր ստացած և յուրաքանչյուր երեք միջինացվող առարկաներից առնվազն 4.0 միավոր ստացած աշխատանքը:

Անհրաժեշտ շեմը հաղթահարելու դեպքում երեխան անցնում է հաջորդ՝ ընդունելության փաստաթղթերի ընդունման փուլ:

23. Գիտելիքների թեստավորման փուլն ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ ներառյալ) իրականացվում է ստուգաթեստի միջոցով: Ստուգաթեստը գնահատվում է 10 միավորային համակարգով: Կախված ավագ դպրոցում հոսքային ուղղության ընտրությունից՝ ստուգաթեստի

գնահատականը ստացվում է համապատասխան առարկայական թեստերի արդյունքների պարզ կշռված միջինից՝ հետևյալ կերպ.

| Թեստավորման առարկա/հոսք | Ֆիզմաթ. հոսք | Հումանիտար հոսք | Բնագիտական հոսք | Տնտեսագիտ. հոսք |
|---|---|---|---|---|
| Մաթեմատիկա | 30% | 20% | 20% | 40% |
| Հայոց լեզու եւ գրականություն | 20% | 30% | 20% | 30% |
| Օտար լեզու (անգլերեն և ռուսաց լեզու) | 20% | 20% | 20% | 30% |
| Ֆիզիկա | 30% | - | - | - |
| Բնագիտություն (քիմիա և կենսաբանություն) | - | - | 40% | - |
| Պատմություն | - | 30% | - | - |

Անցողիկ է համարվում արդյունքային 5.0-ից ավելի միավոր ստացած և բոլոր առարկաներից առնվազն 4.0 միավոր ստացած աշխատանքը: Ընդ որում՝ օտար լեզվի և բնագիտության խմբերի առարկաներից արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվում այն առարկայի արդյունքները, որոնք առավել բարձր են:

24. 3-րդ փուլի շրջանակներում իրականացվում է գնահատման արդյունքների ամփոփում, այն է՝

1) արդյունքների ամփոփում և Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման մասին տեղեկացում ծնող(ներ)ին (օրինական ներկայացուցիչներին) էլեկտրոնային նամակի միջոցով,

2) պայմանագր(եր)ի կնքում:

Հավելված N 3
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի դեկտեմբերի 15-ի N 1365-Ա հրամանի

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. **1-ին դասարանի ընդունելություն.**

**Հիմնարկի մանկապարտեզից Դպրոցի 1-ին դասարան ընդունվող երեխաների, Դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաների, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողների, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողների երեխաների ընդունելություն.**

**18.12.2025թ., 07.01.2026թ.** - (հիշեցում)-նամակ մանկապարտեզի ծնողներին, նամակ Դպրոցում սովորողների (քույր,եղբայր) ծնողներին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողներին, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողներին:

**18.12.2025-14.01.2026թթ.** - ծնողների՝ «բաց դռների» օրվա էլեկտրոնային գրանցում:

**17.01.2026թ.** - «բաց դռների» օր:

**18.12.2025-19.01.2026թթ.** - ընդունելության գրանցում:

**12.01.2026-06.02.2026թթ.** - գրանցված երեխաների անհատական հարցազրույցներ և խմբային խաղ-հանդիպումներ:

**20.02.2026թ.** - արդյունքների ամփոփման և Հանձնաժողովի որոշման մասին էլեկտրոնային նամակի միջոցով ծնողներին տեղեկացում:

**13.03.2026թ.** - պայմանագրերի կնքման վերջնաժամկետ:

**Այլ երեխաների ընդունելություն**.

**07.01.2026թ.** - ընդունելության մեկնարկի մասին հայտարարության տեղադրում Հիմնարկի կայքում, ինչպես նաև սոցիալական ցանցերի էջերում,

**07.01.2026-28.01.2026թթ.** - ծնողների՝ «բաց դռների» օրվա էլեկտրոնային գրանցում,

**24.01.2026թ., 31.01.2026թ.** - «բաց դռների» օրեր,

**24.01.2026-02.02.2026թթ.** - ընդունելության գրանցում,

**27.01.2026-27.02.2026թթ.** - գրանցված երեխաների անհատական հարցազրույցներ և խմբային խաղ-հանդիպումներ,

**11.03.2026թ.** - արդյունքների ամփոփման և Հանձնաժողովի որոշման մասին էլեկտրոնային նամակի միջոցով ծնողներին տեղեկացում,

**27.03.2025թ.** - պայմանագրերի կնքման վերջնաժամկետ:

**2. 2-րդ-ից 12-րդ դասարանների ընդունելություն.**

2-րդ-ից 12-րդ դասարանների ընդունելությունը մեկնարկում է 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանով նախատեսված ուսումնական պարապմունքների ավարտից մեկ շաբաթ հետո՝ առաջին աշխատանքային օրը և Դպրոցում թափուր տեղերի առկայության պարագայում շարունակվում է մինչև 2027 թվականի ապրիլի 1-ը:

**«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

1. **1-ին դասարանի ընդունելություն**.

Հիմնարկի մանկապարտեզից ռուսական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) 1-ին դասարան ընդունվող երեխաների, հիմնարկի դպրոցներում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաների, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողների, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողների երեխաների ընդունելություն:

**25.12.2025թ., 07.01.2026թ.** - նամակների ուղարկում հիմնարկի մանկապարտեզի սաների ծնողներին և հիմնարկի դպրոցների աշակերտների ծնողներին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողներին, այդ թվում՝ կազմակերպության մասնաճյուղերի, հիմնարկների և դուստր ընկերությունների աշխատողներին,

**25.12.2025-14.01.2026թթ.** - ծնողների էլեկտրոնային գրանցում «Բաց դռների օրվան»* մասնակցելու համար,

**17.01.2026թ.** - «Բաց դռների օր»*,

**25.12.2025-19.01.2026թթ.** - ընդունելության գրանցում,

**12.01.2026-25.01.2026թթ.** - գրանցված ընդունվողների անհատական հարցազրույցներ և խմբային խաղ-հանդիպումներ,

**05.02.2026-15.02.2026թթ.** - ընդունելության արդյունքների ամփոփում և ծնողներին տեղեկացում Հանձնաժողովի որոշման մասին էլեկտրոնային նամակի միջոցով,

**27.02.2026թ.** - պայմանագրերի կնքման վերջնաժամկետ:

**Այլ երեխաների ընդունելություն**.

**20.02.2026թ**. - ընդունելության մեկնարկի մասին հայտարարության տեղադրում Հիմնարկի կայքում և սոցիալական ցանցերի էջերում,

**20.02.2026-27.02.2026թթ**. - ծնողների էլեկտրոնային գրանցում «Բաց դռների օրվան» մասնակցելու համար,

**03.03.2026թ**. - «Բաց դռների օր»,

**03.03.2026-05.03.2026թթ**. - ընդունելության գրանցում,

**05.03.2026-16.03.2026թթ**. - գրանցված ընդունվողների անհատական հարցազրույցներ և խմբային խաղ-հանդիպումներ,

**18.03.2026-25.03.2026** - ընդունելության արդյունքների ամփոփում և ծնողներին տեղեկացում Հանձնաժողովի որոշման մասին էլեկտրոնային նամակի միջոցով,

**10.04.2026** - պայմանագրերի կնքման վերջնաժամկետ:

**2. 2–4-րդ դասարաններում ընդունելություն.**

2-րդ-ից 4-րդ դասարանների ընդունելությունը մեկնարկում է 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանով նախատեսված ուսումնական պարապմունքների ավարտից մեկ շաբաթ հետո՝ առաջին աշխատանքային օրը և Դպրոցում թափուր տեղերի առկայության պարագայում շարունակվում է մինչև 2027 թվականի ապրիլի 1-ը:

Հավելված N 4
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի դեկտեմբերի 15-ի N 1365-Ա հրամանի

# ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
«ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»
ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ա.Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

______________________________________________________________________________
______________________________________________________________________________ից
(Սովորողի ծնողի (ծնողների) կամ օրինական ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»
ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սովորողի անունը, հայրանունը, ազգանունը՝
______________________________________________________________________
2. Ո՞ր դպրոցի և դասարանի համար եք դիմում՝ ______________ դպրոցի _______ դասարան:
(տարրական, միջին, ավագ) (նշել դասարանը)
3. Սովորողի՝ դպրոց ընդունման ամսաթիվը՝ 202___ թվականի ______________________-ից:
4. Սովորողի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ ________________________
5. Փաստացի բնակության հասցեն՝
______________________________________________________________________
______________________________________________________________________
6. Հաշվառման հասցեն ***<u>(եթե չի համընկնում փաստացի բնակության հասցեի հետ)</u>***՝
______________________________________________________________________
______________________________________________________________________
7. Սովորողի սոց.քարտի (ՀԾՀ) համարը (առկայության դեպքում) ____________________
կամ դրանից հրաժարված լինելու մասին տեղեկանքի ամսաթիվը՝ « ___ » _______ 202__թ.
8. Սովորողի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցում սովորող կամ մանկապարտեզ հաճախող քույր(երի) և (կամ) եղբայր(ների) և (կամ) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում և (կամ) ենթակա կազմակերպություններում և (կամ) մասնաճյուղերում աշխատող ծնող(ներ)ի անունը, ազգանունը, հայրանունը:

9. Սովորողի քաղաքացիություն(ներ)ը ____________________
10. Ո՞ր դպրոցից է տեղափոխվում Սովորողը (լրացվում է տեղափոխման դեպքում)
____________________
11. Սովորողի առողջական առանձնահատկությունները (տարբեր տեսակի ալերգիաներ՝ այդ թվում՝ սննդային, հավանական նոպաներ, հոգեբանական խնդիրներ, հիվանդություններ և այլն՝ հնարավորության սահմաններում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպելիս և սովորողների սննդակարգը մշակելիս հաշվի առնելու համար):
____________________
____________________
____________________
____________________
12. Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկ՝
   - Սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,
   - Սովորողի ծննդյան վկայականի և/կամ (առկայության դեպքում) անձնագրի բնօրինակը,
   - Դիմողի/դիմողների անձնագրի բնօրինակը՝ համապատասխան պայմանագիր կնքելու նպատակով,
   - 2 լուսանկար՝ 3x4 չափսի,
   - Այլ ____________________
   ____________________

13. Տեղեկություն ծնողների (օրինական ներկայացուցիչների) վերաբերյալ.
Հայրը՝ ____________________
Աշխատանքի վայրը, պաշտոնը՝ ____________________
____________________
Հեռախոսահամարը՝ ____________________, Էլ. փոստ՝ ____________________
Բնակության /հաշվառման հասցեն՝ ***(եթե չի համընկնում սովորողի հաշվառման/փաստացի բնակության հասցեի հետ)***՝
____________________
____________________
Մայրը՝ ____________________
Աշխատանքի վայրը, պաշտոնը՝ ____________________
____________________
Հեռախոսահամարը՝ ____________________, Էլ. փոստ՝ ____________________
Բնակության /հաշվառման հասցեն՝ ***(եթե չի համընկնում սովորողի հաշվառման/փաստացի բնակության հասցեի հետ)***՝
____________________
____________________

***Ծանոթացել եմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի և դպրոցի սովորողի ծնողի միջև կնքվող պայմանագրի պայմաններին և դպրոցի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերին:***

*Տեղեկացված եմ, որ՝*

1) *իմ կողմից տրամադրված էլ. փոստի հասցեն(երը) հանդիսանում է (են) դպրոցի կողմից իրազեկումների/ծանուցումների պաշտոնական միջոց,*
2) *դիմումիս մեջ ներկայացված և (կամ) դիմումին կից փաստաթղթերում առկա տվյալների փոփոխության դեպքում պարտավորվում եմ այդ մասին տեղեկացնել դպրոցին,*
3) *«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հետ կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքելուց հետո, պայմանագրի 19-րդ կետի համաձայն, պարտավորվում եմ, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան չափով վճարել ծառայությունների վճարը (ուսման վարձավճարը):*

☐ *Համաձայն եմ իմ և իմ երեխայի անձնական տվյալների մշակմանը՝ համաձայն ՀՀ օրենսդրության սահմանված կարգի:*

*Համաձայն եմ/ Համաձայն չեմ (ընդգծել համապատասխան դիրքորոշումը), որ իմ երեխայի նկարները կամ տեսաձայնագրությունները հրապարակվեն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերի էջերում:*

____________________________
(ստորագրություն)

Դիմումի ներկայացման ամսաթիվ՝ «_____» ____________ 202__թ.

## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Директору учреждения
«Учебно-спортивный комплекс»
ЗАО «Газпром Армения»
господину А. К. Григоряну

______________________________________________________________

Фамилия, имя, отчество законного представителя (родителя/опекуна) учащегося

### ЗАЯВЛЕНИЕ О ПРИЕМЕ В ШКОЛУ
### УЧРЕЖДЕНИЯ «УЧЕБНО-СПОРТИВНОГО КОМПЛЕКС» ЗАО «ГАЗПРОМ АРМЕНИЯ»

1. Имя, отчество, фамилия учащегося

______________________________________________________________

2. В какой класс подаете заявление ___________ класс
(отметить класс)
3. Дата поступления учащегося в школу ______________________ 202___ год
4. Дата рождения учащегося ________________________
5. Адрес фактического проживания

______________________________________________________________

______________________________________________________________

6. Адрес регистрации (если не совпадает с адресом проживания)

______________________________________________________________

______________________________________________________________

7. Указать Ф.И.О брата (братьев), сестры (сестер) учащегося, обучающихся в школе или посещающих детский сад учреждения «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения» и/или родителей, работающих в ЗАО «Газпром Армения» и/или в подведомственных организациях ЗАО «Газпром Армения».

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

8. Гражданство учащегося и его родителей (законных представителей)

______________________________________________________________

______________________________________________________________

9. Из какого учебного заведения осуществляется перевод в школу (заполняется при переводе)

______________________________________________________________

10. Особенности здоровья учащегося (различные виды аллергий, в том числе, пищевые; возможные приступы; психологические проблемы; заболевания, которые в рамках возможностей школы будут учтены при организации учебного процесса и разработке рациона питания детей в школе учреждения «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения»).

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

11. Перечень документов прилагаемых к заявлению:
    - ☐ Копия свидетельства о рождении учащегося и/или (при наличии) паспорта
    - ☐ Копия паспорта заявителя/заявителей
    - ☐ Справка о месте проживания учащегося и родителей
    - ☐ 2 фотографии размером 3x4
    - ☐ Личное дело учащегося (при переводе)*
    - ☐ Прочее______________________________________________

При предъявлении копий документов, указанных в настоящем пункте, одновременно предъявляются их оригиналы в целях проверки подлинности документов.

12. Сведения о родителях (законных предстовителях)

Отец ________________________________________________

Место работы, должность или род деятельности

______________________________________________________________________________

Телефон ______________________ эл. почта ______________________

Адрес проживания /регистрации (если не совпадает с адресом проживания/регистрации учащегося)

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

Мать ________________________________________________

Место работы, должность или род деятельности

______________________________________________________________________________

Телефон ______________________ эл. почта ______________________

Адрес проживания /регистрации (если не совпадает с адресом проживания/регистрации учащегося)

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

***Ознакомился/ознакомилась с условиями договора и прочими документами, регламентирующими деятельность учреждения «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения»***

***Ознакомлен/а, что:***

1) ***Предоставленный мной адрес эл.почты является официальным средством получения сообщений/уведомлений.***
2) ***В случае изменения данных, предоставленных в заявлении и/или в прочих документах, обязуюсь проинформировать школу.***
3) ***После заключения договора с учреждением «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения» обязуюсь в течение 3-х рабочих дней в соответствующем размере оплатить за предоставляемые услуги (плату за обучение).***

☐ **Согласен (согласна) на обработку своих персональных данных и персональных данных ребенка в порядке, установленном законодательством РА.**

**Согласен (согласна) /Не согласен (не согласна) (подчеркнуть соответствующую позицию) на публикацию фотографий или видеозаписей моего ребенка на официальном сайте и на социальных страницах учреждения «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения»**

_________________________________ (подпись)

_________________________________ (подпись)

Дата «_____» ____________ 202__г.